

Գ. Բ. ԶԱՀՈՒԿՅԱՆ
ՀՍՍՀ ԳԱ քղրակից-անդամ

ՀԱՅԵՐԵՆՐ ԵՎ ՀԻՆ ՄԱԿԵՊՈՆԵՐԵՆՐ

§ 1. Պատմական Մակեդոնիան զտնվել է Բալկանյան թերակղզու կենտրոնական մասում և սահմանակցել է Թրակիային, Իլիրիային և Հունաստանին: Նրա տերիտորիան այժմ բաշխված է Հարավսլավիայի (Հարավ-արևելյան մասը), Հունաստանի (Հյուսիս-արևելյան մասը) և Բուլղարիայի (Հարավ-արևմտյան մասը) միջև: Բացի բուն մակեդոնացիներից այդ տերիտորիաներում բնակվել են նաև թրակացիները և իլիրիացիները: Մասամբ էլ այս է պատճառը, որ դժվար է որոշակի սահման անցկացնել մակեդոնական, թրակյան և իլիրիական որոշ հատուկ անունների միջև:

Մ. թ. ա. 1-ին հազարամյակի սկզբներից Մակեդոնիայում ուժեղանում է հունական ազդեցությունը, տարածվում են հունական լեզուն ու մշակույթը, հետագայում սկսում է օգտագործվել հունական գիրը: Մ. թ. ա. 5-րդ դ. 1-ին կեսին մակեդոնական թագավորությունը մեջ միավորվում է Ներքին Մակեդոնիան, իսկ ավելի ուշ՝ Ֆիլիպ 2-րդի ժամանակ (359—336) նրան միացվում է Վերին Մակեդոնիան: Ֆիլիպ 2-րդը իր զերիշխանությունը տարածում է և Հունաստանի վրա: Ֆիլիպի որդու՝ Ալեքսանդր Մակեդոնացու ժամանակ Մակեդոնիան մեծ հզորություն է հասնում և շատ կարևոր դեր խաղում հին աշխարհի պատմության մեջ: Ալեքսանդրի հաջորդների ժամանակ տեղի է ունենում մակեդոնական պետության թուլացում և տրոհում: Հռոմի հետ վարած պալքարի ընթացքում Մակեդոնիան թուլանում է և 148 թ. վերածվում Հռոմեական պրովինցիայի: Մ. թ. V դ. Հռոմեական կայսրության՝ արևմտյան և արևելյան մասերի բաժանվելուց հետո այն մտնում է արևելյան կայսրության կազմի մեջ:

Մ. թ. VI դ. և VII դ. սկզբին Մակեդոնիայում բնակություն են հաստատում և աստիճանաբար զերակշռող դառնում սլավոնական ցեղերը, որոնք խոսում էին բուլղարերենին մոտ հարավ-սլավոնական մի բարբառով: Այս բարբառն այժմ դարձել է մակեդոնական զրական լեզվի հիմքը, որ Հարավ-սլավիայի Ֆեդերատիվ Ժողովրդական Հանրապետության կազմի մեջ մտնող 6 հանրապետություններից մեկի՝ Մակեդոնիայի հիմնական լեզուն է: Բուն մակեդոներենի հետ չչփոթեկու նպատակով սա կարելի է կոչել սլավոնական մակեդոներեն:

§ 2. Մակեդոներենի մասին մեր ունեցած տեղեկությունները հենվում են սակավաթիվ զրոսաների և հատուկ անունների վրա: Մակեդոներենի բնույթի հարցին անդրադարձած գիտնականները¹ հակված են այն մոտ համարելու հունարենին՝ ընդհուպ մինչև բարբառային մերձավորության աստիճան: Մա-

¹ Տե՛ս Օ. Hoffmann, Die Makedonen, ihre Sprache und ihr Volkstum, Göttingen, 1906 (հմտ. Մ. Բ. Ֆասմերի զրախոսականը՝ „К вопросу о языке древних македонян“),

կեղոնացիների՝ իրենց սկզբնական բնակավայրից (Հալիակմոն գետի հովտից) դեպի հյուսիս ու արևելք տարածվելու և փոյուզացիների, միգիացիների, թըրակացիների ու իլիրիացիների հետ խառնվելու հետևանքով մակեդոններեն զգալի չափով ենթարկվել է դրանց ենթաշերտային ազդեցությանը և համեմատաբար հեռացել հունարենից: Ավելի ուշ, հունարենի և հունական մշակութի ուժեղացման պայմաններում, սկսվում է հակառակ պրոցեսը: Ոմանք հին մակեդոններենի մեջ յուրատեսակ կապող օղակ են տեսնում հունարենի և փոյուզերենի միջև՝ ընդունելով, սակայն, որ այն ավելի մոտ է եղել առաջինին, քան երկրորդին: Հին մակեդոններենի և փոյուզերենի փոխազդեցությունն առանձնապես ուժեղ է եղել Փոքր Ասիայում, ուր մ. թ. ա. IX—VIII դարամիջին տեղափոխվել է մակեդոնական մեծաթիվ մի ցեղախումբ և բնակություն հաստատել Գորդիոն, Անկարա, Պեսինոս և այլ քաղաքների շրջանում, այդ ցեղախումբը մեծ դեր է խաղացել փոյուզական պետության կազմում:

Հունարենի և մակեդոններենի մերձավորության մասին է խոսում այն փաստը, որ իբրև մակեդոնական վկայված ութսուն բառից (գլոսայից) մոտ 60%-ը հունական (այդ թվում՝ բարբառային) բառերի հետ ընդհանուր ծագում ունի (40%-ը հավաստիորեն, 20%-ը հավանականորեն), իսկ 15%-ը փոխ է առնված հունարենից: Մնացած բառերը, եթե բացառենք ծագումով անհայտները, կամ ակնհայտ փոխառություններ են շրջակա այնպիսի լեզուներից, ինչպիսիք են փոյուզերենը (βρο ?), թրակերենը (αρχελα), իլիրերենը (αὐτόν, թերևս նաև αὐλῆ), կամ համապատասխանություններ ունեն հնդերոպական այլ լեզուներում (ծագումնային զուգահեռներ և, թերևս, փոխառություններ ընդհանուր աղբյուրից)՝ լատիներենում (vīl, vīlervos, թերևս, նաև vīlervos)², հին հնդկերենում (vīlervos, vīlerv, vīlerv), բալթիկ-սլավոնականում (vīlerv)³:

Մակեդոնական մի քանի հարյուր հատուկ անունների ուսումնասիրությունը մեզ բերում է գրեթե միևնույն եզրակացություններին: Այս տեսակետից ամենից ավելի բնորոշ են ամսանուններն ու անձնանունները:

Մակեդոնական 12 ամսանունից 4-ը նույնն են հունականների հետ (Λαῖος, Ἀρτεμισιος, Διος, Πάναμος), 2-ը՝ հունականների կրճատ ձևերն են (Δαῖος, Λαῖος) հուն. Ἡεο-ῶα-ῖος-ի և Ὀρε-ῶα-ῖος-ի դիմաց), 4-ը ածանցելի

„Журн. Мин. нар. просв.“, 1908, 13, էջ 22—35). նույնի հոդվածը Pauly-Wissowa-ի „Realencyclopädie“-ում, 14, 1928, էջ 681—697. V. Pisanì, La posizione linguistica del macedone, „Revue internationale des études balkaniques“, I, 5, 1937, էջ 8 և 52. I. I. Russu, „Ephemeris dacoromana“, 8, 1938, էջ 105—232. J. N. Kalléris, Les anciens Macédoniens, études linguistiques et historiques, I, Athènes, 1954. Ч. Погирк. Отношение древнемакедонского языка к древнегреческому, канд. дисс., Л.-д, 1958 (автореферат, Л.-д, 1959). С. Poghirc, Considérations sur le lexique de l'ancien macédonien, „Revue de linguistique“, V, 1960, էջ 130 և 52. V. Georgiev, La toponymie ancienne de la péninsule balkanique et la thèse Méditerranéenne, Sofia, 1961, էջ 24 և 52. A. P. Dascalakis, The Hellenism of the Ancient Macedonians, Salontka, 1965. O. Haas, Die phrygischen Sprachdenkmäler, Sofia, 1966. P. Chantraine, La langue des Macédoniens et leur onomastique, „Bulletin de la société de Linguistique de Paris“, 1966, 1, էջ 157 և 52.

² Հմմտ. V. Pisanì, նշ. աշխ., էջ 11.

³ Ч. Погирк, նշ. աշխ., էջ 67—68.

են հունական արմատներից [Δύστρος (=Θύστρος, հմմտ. հուն. Θύς, ալիև Δύσ-տրոս ամսանունը, δύσ- սկառաղի, էքստագի մեջ լինելը, δύσ-τας սրակ-քոսուհի), Ξανόχως (=Ξανόχως, հմմտ. Ξανόχια տոնանունը՝ ֆանիոն-ից սոսկի-դեղին), Περίτιος (հմմտ. հուն. Περίτια սերթ, շքերթ տոնանունը՝ περι-ίεναι-ից շրջանցել, շրջել), Ίπερβηρεταῖος (մի տոնի անունից, հմմտ. հուն. ὑπερ-φερω սիոխադրել, գերազանցել)]։ միայն 2-ն են, որ հունական հալաստի գուգահեռներ չունեն (Λύδνατος, Γόρπειατος, վերջինս հազիվ թե կապ ունի Δορπειա-ի կամ γαρπός-ի հետ)։

Մակեդոնական անձնանունների զգալի մասը հունականների հետ նույնն է։ Մնացած անձնանունների գերակշռող մեծամասնությունը (շուրջ հարյուր) հունական (այդ թվում բարբառային) որոշակի գուգահեռներ ունի։ Մեկուկես տասնյակից էլ պակաս է այն անձնանունների թիվը, որոնք հունական քիչ թե շատ հալաստի գուգահեռներ չունեն, ծագումով մասամբ իլիրիական են, մասամբ թրակյան կամ թրակա-փոյուզական գուգահեռներ ունեն՝ Λύδα- (իգ. <իլիր.), Κύννα (Κυννα, իգ. <իլիր.), Σίρρας (<իլիր.), Βυργίνος Κρα-տոնός (թրակյան ծագմամբ իշխանի անուն), Σαβατταρας (հմմտ. փոյուզ. Σα-βαδός դիցանունը կամ թրակ. Sabatium տեղանունը), Σελήνης (հմմտ. Σελή-νης՝ Բակքոսի դաստիարակն ու ուղեկիցը՝ հ.-հ. (s)k'el- ցատկել >թրակ. սել- կամ թրակ. ζελος սգինի), Ἀρσββας (հմմտ. համապատասխան անձնա-նունը էպիրոսում՝ Ἀρσββα քաղաքի անունից), Δαδων (հմմտ. թրակ. Dada՝ փոքրասիական և սկյութական գուգահեռներով), Δερμας (հմմտ. Δαρδανός?) Δερβε(ας), Μαρσας, Μόλωνας, Μόλων, Σιβύριος։

Մակեդոնական դիցարանական անունները մեծ մասամբ հունական են կամ հունարենով ստուգաբանվի՝ Ήρας, Θυλός (համապատասխանում է հու-նական Արևսին, Կ-ն փոխանակ Δ-ի հունական ազդեցության արդյունք է), Τερσάνωρ (համապատասխանում է Իրոնիսիոսին), Ἀρσανίδες [համապատաս-խանում են հուն. էրինիներին ('Ερινύες)՝ վրեժխնդրության աստվածուհիներին, հմմտ. հուն. արա ժանեթը], Δαρμων (բժշկության աստված, հմմտ. հուն. ἰατρος խիղախություն. խիղախության աղբյուր), Θουρίδες ժալիրժահարս-ներ, մուսաներ) (=հուն. Θεορίδες, Թ-ն փոխանակ Δ-ի հուն. ազդեցության արդյունք է)։ Կան թրակա-փոյուզական գուգահեռներ ունեցող դիցարանա-կան անուններ՝ Σαντασι (Սիլեններ, հմմտ. փոյուզ. Σαβαδός, Σανταῖος), Κλω-σωνες և Μεραιόνες (Սարածիոսի հետերդներ՝ իգ. սեոի), Ζεργγυ (համապա-տասխանում է Ափրոդիտեին, թրակ. Ζεργγυα տեղանունից), βεσ [մակեդ. քրմերի աղոթքներում հանդիպող բացականչություն՝ «օղ(?)» (հ.-հ. ue-սիչելը)]։

Մեծ թիվ են կազմում նաև հունական գուգահեռներ ունեցող կամ հու-նական տարրերով ստուգաբանվող տեղանունները (պահպանվել են 160 քաղաքանուններ, մոտ երկու տասնյակի հասնող գավառանուններ, 60-ից ավելի ճանապարհային կայանների անուններ, որոնք մասամբ համընկնում են քաղաքանունների հետ, այլև լեռների, գետերի, անտառների անուններ)։

Հին մակեդոներենը բնութագրվում է հնչյունական հետևյալ առանձնա-հատկություններով.

1) Հ.-հ. շնչեղ ձայնեղների (bh, dh, gh) և ձայնեղների (b, d, g) դիմաց առկա են ձայնեղներ (β, δ, γ), խուլերի (p, t, k) դիմաց՝ խուլեր

(π , τ , χ). Ընդ որում՝ ա) kl -ն փոխվում է $\tau\pi$ -ի, բ) dhv -ն՝ o -ի, գ) dy -ն՝ β -ի, դ) միջձայնավորային $-y$ -ն ուշ շրջանում վերածվում է զրոյի, Տեղաշարժ եւամ ձայնեղների ու խուլների շփոթում (ինչպես թրակերենում և իլիրերենում) չի նկատվում: Խլացման և շնչեղացման լրացուցիչ երևույթներով բնութագրվող մի շարք հասարակ [$\chi a v a \theta o$, $\chi o \mu \beta o \nu$ (* g -ով ձևերից), $\chi e \beta a \lambda \gamma$ (* ghe - bhe 1-), $\alpha o \tau o$, $\beta a \theta a \alpha$, $\zeta e \rho e \theta o \nu$, $\alpha \gamma \chi a \rho \mu o \nu$, $\gamma a \theta o \nu$ (շնչեղ խուլեր՝ փոխանակ պարզ ձայնեղների)] և հատուկ տնուններ կամ ուղղելի են, կամ մակեդոնական չեն, կամ ենթարկվել են լրացուցիչ օրենքների ներդրածություն, կամ արդյունք են այլ լեզուների (հատկապես հունարենի՝ o/μ -ի, β/θ -ի դեպքում) ազդեցության:

2) Հ.-և. քմայնացած ետնալեզվայինների ($g'h$, g' , k') դիմաց առկա են քմայնացած ետնալեզվայիններ (γ , χ), այսինքն՝ մակեդոներենը կենտումային և ոչ սատեմային լեզու է (ի տարբերություն թրակերենի և իլիրերենի, այլև հայերենի):

3) Հ.-և. շրթնայնացած ետնալեզվայինները ($g^u n$, g^u , k^u) a , o -ից առաջ փոխվում են շրթնայինների (β , π), e -ից առաջ [և՛ θ և՛ ζ $e \rho e \theta o \nu$ ($\equiv$ հոմեր. $\beta e \rho e \theta o \nu$) և $i \zeta e \lambda a$ (հ.-և. $g^u hel$ - $\alpha o \mu e \lambda i a$ > հուն. $\mu e \lambda i a$) օրինակները]՝ առաջնալեզվայինների (o , τ): Միևնույն բառի մեջ երկու շրթնայնացած ետնալեզվայինների առկայությունը դեպքում տարնմանություն հետևանքով տեղի է ունենում առաջինի ապաշրթնայնացում:

4) Հ.-և. s -ն (այլև sy -ն) բառասկզբում ընկնում է կամ վերածվում շնչի. միջձայնավորային դիրքում ընկնում է, բառավերջում պահպանվում: Միջձայնավորային s -ի ձայնեղացում (ինչպես ենթադրվում է թրակերենի և իլիրերենի համար) չի նկատվում. $\chi a \lambda \zeta a$ «անտառ» բառը պետք է համարել փոխառություն հյուսիսային հարևաններից:

5) Հ.-և. r , l , m , n ձայնորդները հիմնականում պահպանվում են, ընդ որում՝ ա) λs , λy ($i \lambda$)-ն վերածվում են μ -ի, բ) ρs , ρy (ρi)-ն՝ β -ի, գ) γs , γy -ն՝ γv -ի, դ) θs -ն՝ β -ի, դ) բառավերջի m -ն տալիս է v (ինչպես հունարենում, իլիրերենում, թրակերենում, այլև հայերենում, կիլիկական, գերմանական և սլավոնական լեզուներում), ե) վանկարար ձայնորդները վերածվում են $\alpha +$ ձայնորդ կապակցության (ինչպես հունարենում և հայերենում)՝ ընդլայն տարրի անկումով (ինչպես հունարենում), γ -ն թերևս փոխվում է նաև o -ի:

6) Հ.-և. ոչ վանկարար λ -ն և μ -ն (կիսաձայններ) անհետանում են, ինչպես հունարենում, երկու հատուկ անվան մեջ միջձայնավորային μ -ն պահպանում է ($\Sigma \chi a \mu \theta a$, $\Gamma a \mu a \gamma$):

7) Հ.-և. i -ով և u -ով երկբարբառները (ai , ei , au և այլն) պահպանվում են, բացառությամբ բացարձակ սկզբնադիրքում անշեշտ a , ունեցող $\alpha o \gamma$ «երկինք» ($\equiv$ հուն. $\alpha i \theta \gamma$) և $\alpha o \rho a i a$ (հմմտ. հուն. $\alpha i \theta \rho i a$ «պալձառ երկինք, լավ եղանակ») բառերի, որոնց մեջ տեղի է ունենում ai > α անցումը (մինչդեռ u -ով երկբարբառները մենարարբառացի են թրակերենում և իլիրերենում ու մեհապերենում):

8) Հ.-և. e , o , a -ն ներկայացված են որպես ε , o , α (θ > α անցում, ինչպես թրակերենում և մեհապերենում, չի նկատվում), ϵ , o , α -ն՝ որպես γ , ω , α , i , u , i , u -ն՝ որպես i , u , i (?), u (?), ընդ որում՝ ա) երկար o -ն

(¹⁰) մակեդոներենում փակ ձայնավոր լինելով գրություն մեջ սովորաբար տրվում է որպես *o* (ըստ ոմանց՝ *o*-րդ դարից փոխվում է *o*-ի. այսպես է վիճակը սաև հունարենի թեսալական բարբառում, հայերենում, փոյուզերենում, թրակերենում և իլիրերենում), *p*) *e*-ն *n*-ից առաջ փոխվում է *i*-ի (ինչպես հայերենում), *q*) *a*-ն *m*-ից առաջ դառնում է *o*:

Հին մակեդոներենից պահպանված բառաթեքական և բառակազմական ձևերը հիմնականում համընկնում են հունականների հետ: Ահավասիկ մի քանի նախամասնիկ՝ *a*- թան-*a* (ἀγαν թանգործություն, պարապություն՝ բառում, հմմտ. հուն. *a-*, հայ. *ան-*), *iv*- թմեջ, միջա-*a* (iv-նէα *am*իջ-օրեա՝ բառում, հմմտ. հուն. *ev-*, հայ. *իւ, ըն*), *av*- (ἀγχαρυν թնիզակածայրը վե՛ր՝ բառում, հմմտ. հուն. *av-*, հայ. *ան-*՝ անկողին, անձեռոցիկ՝ բառերում), *ap*- (απαγίος < *ap*-*ap*իός *ei*լեռնային դեռ՝ բառում, հմմտ. հուն. *apo-*), *pa*- (παραινους անվան մեջ, հմմտ. հուն. *para-*, հայ. *առ-*), *pe*- (περ- *ei*առաջ անձնանվան մեջ, հմմտ. հուն. *pe-*) և այլն:

§ 3. Հայերենի և հին մակեդոներենի փոխհարաբերության հարցին մինչև այժմ որևէ ուսումնասիրություն չի նվիրվել: Մակեդոներենի և հայերենի հետազոտողները բավարարվել են միայն հայ-մակեդոնական զուգահեռների մատնանշումով: Սրանց մեջ հատուկ հիշատակության արժանի են Օ. Հասսի՝ փուլուզերենին և փուլուզերենի ու հայերենի փոխհարաբերությանը նվիրված ուսումնասիրությունները, որոնց մեջ ուշադրություն է հատկացվում նաև հայերենի՝ մակեդոներենից կատարած փոխառությունների հարցին⁴: Օ. Հասսը տեսականորեն հնարավոր է համարում հայերի և մակեդոնացիների շփման ու փոխառությունների երեք հնարավոր ժամանակաշրջան տարրերն՝ 1) Բալկանյան թերակղզում հայերի բնակություն, 2) հայերի՝ Փոքր Ասիայում գտնվելու ու մակեդոնական բրիգների ճնշման հետևանքով հետագա տեղաշարժման և 3) Ալեքսանդր Մակեդոնացու ռազմական արշավանքների ազդեցության: Բնականում, սակայն, փոխառությունների այս երեք շերտերի տարրերակման հարցը թողնելով մի կողմ՝ Օ. Հասսը զրադվում է սույն բառի փոխառություն հարցով⁵, այլև նշում Հեսիքիսի *αρχαῖος* ժարձիվ՝ մակեդոնական զլոսայի և հայ. *արթիլ*-ի զուգադիպությունը, որ, սակայն, համարում է քիչ հետաքրքրական՝ չնորհիվ մակեդ. բառի՝ հունարենից փոխառվել լինելու հնարավորության:

Ինչ վերաբերում է հայերենի և մակեդոներենի ցեղակցական հարաբերությունների բնույթին, ապա այդ հարցի լուծումը կախված է մակեդոներենի բնույթի պարզաբանումից: Դանի որ մակեդոներենը մոտ է եղել հունարենին և յուրատեսակ կապող օղակ հանդիսացել նրա և փուլուզերենի միջև, ապա պետք է ենթադրել հայերենի և մակեդոներենի ցեղակցական զգալի մերձավորություն: Յավոք սրտի, մակեդոներենի նյութի սղությունը հնարավորություն չի տալիս պարզելու քերականական զուգադիպումների բնույթը: Բա-

⁴ Հմմտ. հատկապես Օ. Haas, Armenier und Phryger, „Linguistique balkanique“, III, 2, 1961, էջ 51—54 և Die phrygischen Sprachdenkmäler, „Linguistique balkanique“, X, 1966, էջ 253—254:

⁵ Այս մասին տե՛ս մեր «Հայերենը և փուլուզերենը» հոդվածում, «Պատմա-բանասիրական հանդես», 1968, № 2:

ոային զուգադիպումների քննությունը թողնելով հաջորդ պարագրաֆներին՝ ախտեղ բերենք հայ-մակեդոնական հնչյունական փոխհարաբերությունն արտացոլող մի աղյուսակ.

Հ.-Ե.	Մակեդոնե- րեն	Հայերեն	Հ.-Ե.	Մակեդոնե- րեն	Հայերեն
bh		բ	r	ռթ	ար
dh	ծ	դ	l		ալ, աղ
g'h	չ	ձ	ռ	ա	ամ
gh	ի	գ	լ	ա	ան
guh		դ	i	լ	ի
b	բ	պ	l	լ	ի
d	ծ	տ	u	ու	ու
g'	չ	ծ	u	յ	ու
g	չ	կ	e	ե	ե
gv		կ	ē	դ	ի
p	պ	հ	o	ո	ո
	փ	թ	o	օ (օօ)	ու
k'		ս	a	ա	ա
k		ք	a	ա	ա
ku	ք	ք	ei	եյ	է
s	—	հյ	oi	օյ	է
		ր	ai	այ, ա	ալ
l		լ, ղ	eu	եյ	ոլ
m	մ	մ	ou	օյ	ոլ
n	ն	ն	au	այ	աւ
l	—	ջ	ə	ա	ա
u	—	դ			

§ 4. Օ. Հոֆմանը և մակեդոներենի մյուս հետազոտողները սովորաբար տարբերում են մակեդոնական համարվող բառերի 3 շերտ՝ 1) հունական բառեր (մասամբ բարբառային որևէ ձևով), որոնք կապված են մակեդոնական կյանքի հետ և հավանաբար մակեդոնական ծագում ունեն. 2) հունական որոշակի զուգահեռներ ունեցող, բայց ոչ հունական կերպարանքով բառեր՝ մասամբ որպես մակեդոնական վկայված, մասամբ որպես այդպիսին ենթադրվող (ըստ հնչյունական օրենքների), 3) հունական հավաստի զուգահեռներ չունեցող մակեդոնական բառեր (որոշ մասով փոխառություններ):

Մակեդոնական բառերի այս երեք շերտերի և հայերենի բառապաշարի միջև առկա են ծագումնային հետեյալ զուգադիպումները:

1) Հ.-հ. bh, dh, gh.

οανος αμωζα (=հուն. οανωτος αμωζα) [հ.-հ. dheu-, dhuen(ə)- սիո- շիանալ, ցնդել, ցրվել. ուժեղ շարժվել. փոշի. մութ] — դեղեիմ, [թերևս նաև դի, -ոյ (հ.-հ. dheu- սանհետանալ, ուշագնաց լինել, մեռնել)]⁶.

οωραξ սիωթաղա (=հուն. οωραξ սիրահ, կրծքապան. պահպանիչ. կուրծք. իրան) (հ.-հ. dher- պահել) — դարեմ, դադար.

2) Հ.-հ. b, d, g.

οαιαξ αωνջրպետ, բաժանիչ [հ.-հ. da(i)- բաժանել] — տաւն, տի ստարիք (սժամանակահատված).

δερυλλος սծառ, -ορυμη αωνտառ, պուրակ (Διν-ορυμη տեղանվան մեջ) (հ.-հ. deru-, dōru-, dr(e)u-, drou-, dreuə-, dru- սծառ) — տարգալ, տրամ սամուր, պինդ.

-οεα սոր [iv-δία (*en-diuiā) սկես-որ, միջ-որեւ բառի մեջ] (հ.-հ. del- շողալ, սիայլել) — տիւ.

εοεατος αարքունի ծառայապետ, արքունի սեղանապետ (հ.-հ. ed- ռուտել)⁷ — ուտեմ.

γουα սիորոտիք, ընդերք (հ.-հ. geu- սծակ, [թեքել], gud-, geud-, ալլե gudo-m սաղիք) — կուտ, ալլե կուտն, կրուկն, կոր, կորիկ.

γωπαξ (հոգն. հայց.) սսև ագապ, արջնագապ, եղջերուկ (հմմտ. հուն. γωπαξ՝ γου սուրուր, ցին) (հ.-հ. geu- սծակ, [թեքել]) — կուտն, կրուկն, կոր, կորիկ, կուտ.

γύαα սգավաթ (հ.-հ. geu- սծակ, [թեքել]) — կուտն, կրուկն, կոր, կորիկ, կուտ.

3) Հ.-հ. p(h), t(h), k(h).

πελος սծերունի (բոց. ալեոր) (հ.-հ. pel- սգորշ, դժգուն) — ալի-ք սսպիտակ մաղ (հմմտ. ալեոր, ալեհեր, ալեղարդ).

α-σπιλος սլեոնային գետ (απ-σπιλος = հուն. απ-σπιλος սլեոնաժայռերից իջնող. σπιλος սքարափ, առափնյա ժայռ) [հ.-հ. (s)p(h)ēi-: (s)p(h)ī- սսուր, սրածայր փայտ] — փքին սնետ (phikīno-), [թերևս նաև փայտ.

χαρπεα⁸ մակեդոնական մի պար (հ.-հ. (s)ker- սկտրել, (s)kerp-, որտեղից հուն. χαρπος սպտուղ, հ. վ. գերմ. herbist սաշուն (սպտղաքաղի ժամանակ)]⁹ — քերեմ, քորեմ, քերթեմ, քերծեմ.

4) Հ.-հ. g'h, g', k'.

αγ- [αγημα սթիկնագոր՝ մակեդոնական ընտիր հեծելագորից (εταίρος) բաղկացած, աչոն-աչա մակեդոնական մի պաշտոն բառերում] (հ.-հ. αγ- սքշել, շարժման մեջ դնել, առաջնորդել) — ածեմ.

Վերջին համեմատությունը (նի) հնարավոր է, եթե հ.-հ. երկու արմատները կապված են.

⁷ Ըստ Օ. Հոֆմանի՝ ἐνέσπρος = հուն. ἐπι-σπρος սվերակացու:

⁸ Փխկ. χαρπαζ-ը. որ ավանդված է որպես թեսալական ձև. ալի-ի փոխարեն ε-ով զրուծվող զրիչների ուշ արտասանություն արգյունք է համարվում:

⁹ Ստուգարանությունը կասկածելի է. հմմտ. H. Frisk, Griechisches etymologisches Wörterbuch, I, 1960, էջ 791: Ավելի շուտ համեմատելի է հուն. χαρπαζος սարա-դրնթաց, արագաշարժ բառի հետ, որ ըստ Սոլմսենի ծագում է հ.-հ. (s)ker-ից (սկը-տրտել):

αργυρεος «արծիվ» (հ.-հ. reg'- «ուղիղ, ուղղել», rg'i-p-) — արծուի, -ույ. առջև, առջև, իշխող» [հմմտ. մակեդ. դիցարանական արքայանունը՝ նույնպես մակեդ. (բրբու. այլ ձև) Kαργος անձնանվան կողքին] (հ.-հ. k'er- «մարմնի վերջնամաս՝ գլուխ, եղջյուր») — սար.

αργυρεος, այլև թերևս առջև «ապօրինի որդի» (որպես աղջկա, կույսի դավակ), հմմտ. հուն. αργη «աղջիկ, կույս», αργα (αργα) «աղջիկ, կույս», թերևս նաև առջև «աղջիկ» (հմմտ. մակեդ. փոքրացուցիչ ածանցը, որտեղ օ-ն ti-ից) (հ.-հ. k'er- «աճել, աճեցնել, սնել») — սեր, սերմ, սերունդ, սերմն, սեռ¹¹.

ακρος «սահմանանիշ քարեր», -ακρ- (Βαλακρος անձնանվան մեջ) (հ.-հ. ak'- «սուր, քար») — ասեղն.

5) հ.-հ. gubh, gub, kub.

βιβρη «լուղի նստվածք» (υποστρωμα εις βιβρη) [հ.-հ. gubbh- կամ (gubbh-), gubbh- «սուղ(վ)ել, ընկղմ(վ)ել», որտեղից հուն. βιβρω «ընկղմել»] — կաւ, -ի¹².

αβρου «սուսամբար, խնկածաղիկ, մարեմ (եթերատու բույս, Majorana hortensis)» [հ.-հ. gubh-, gubh-s «ծանր», որտեղից gubh-o(n)-, gubhā «աղաց», այս արմատից է գոթ. quairrus-ը «քնքուլ», մեղմ»] — երկան.

αβρ «մակեդոնական մի զինապար» [հ.-հ. kubel- «պտտ(վ)ել»] — եղ-անիմ, եղան, եղանակ, լեղում «փոխել, դարձնել», լաղ- (լաղադարձիմ, լաղակարծ բառերի մեջ).

βερ «սիհ, վիրապ» (հմմտ. հուն. βέρβρον, βερβρον «սիհ, վիրապ») (հ.-հ. gubh- «կլանել, կլան») — կեր, կերակուր, կոկորդ.

6) հ.-հ. s.

αδρος «խառնուրդ-ըմպելիք, փունջ», Ἀδρος (անձնանուն), Ἀδρα (իգ. անձնանուն) (հմմտ. հուն. αδρος, արδρος «քաղցր») (հ.-հ. suad- «քաղցր») — քաղցր, -ու¹³.

αλῆ «վարազ» (հ.-հ. sel- «ցատկել») — լաղթեմ¹⁴.

αδρος «ճամպուրուկ, զգեստապարկ, պատյան» (հմմտ. հուն. αδρος «աոր-տա, ճամպուրուկ», αδρος «փոկ, ձգափոկ», αδρος «բարձրացնել») (հ.-հ. uer- «կապել, զուգակցել, կախել» uer- «բարձր տեղ» արմատի կողքին) — դեր «վեր»¹⁵.

εταρος «մակեդոնական հեծյալ ազնվական, ասպետ» [հ.-հ. se, s(e)ue «մեկուսի, ինքնին, ինքը», s(e)uo- «իր, լուր», se-t-, որտեղից սուս. πο-сeт-иѣ «ալցելել»] — ինքն, իւր, թերևս նաև հիւր.

¹⁰ Ըստ Հոֆմանի՝ -αδρος-ով (սուր) ձևը ժող. ստուգաբանության արդյունք է՝ փխկ. αδρος-ը. սակայն նա հնարավոր է համարում բառը դիտել որպես բուն հունական (հմմտ. հոմեր. αδρος «արագոտն»՝ օրջա-ից «ձգել, տարածել»:

¹¹ Հմմտ. նաև ցորեն, ցարասի (մի այլ հ.-հ. լեզվից):

¹² Կուլ-ի ստուգաբանությունն ըստ Պաորուրանյանի. Հր. Աճառյանը չի ընդունում: Հմմտ. սակայն հ.-հ. gubbh- «լարծուն, ղոնդողանման, շերեփածուկ, խլուրդ», որ թերևս կապված է gubbh- «սուղ(վ)ել» արմատի հետ:

¹³ Հայ. բառի ծագումը պարզ չէ. կաղմված են համարում suad-ի և dlk'u- (այլև sal-d-u) «քաղցր» ձևերի կոնտամինացիայով:

¹⁴ Հայ. բառի ստուգաբանությունը Հր. Աճառյանին է:

¹⁵ Հր. Աճառյանը (Հայ. արմ. բառ., 2, էջ 142—143) համեմատում է հուն. αείρω-ի հետ, որ, սակայն, Պոկոնոսու բառարանում է դրված է uer- «կապել» արմատի տակ՝ uer- «բարձր տեղ» արմատից առանձին:

ῥοῦβροτος «խլուս, ջրալի կերակուր» (հմմտ. հուն. ῥοῦβρυα «խլուս, ջրալի կերակուր») (հ.-հ. srebh-, srbh-, serbh- «խմել, խաշտել») — արբի «խըմեցի».

αἶος «անտառ» (հ.-հ. ōs-, os-k- «հացի, հացենի», որտեղից հուն. αἶος «հաճարի, հաճարենի») — հացի.

7) հ.-հ. r, l, m, n, j, y.

μαγνῆ «մի տեսակ համեղ կերակուր» [հ.-հ. mag'- «ճնշել, սղմել, շոշափել»¹⁶ menk-ի (սղմել, ճնշել, մանրել) կողքին]¹⁶ — մածուն, մածնում¹⁷. առաջ քնքույշ, թարմ, նոր» (հ.-հ. mel- «մանրացնել, աղալ, խրփել, քնքույշ, մեղմ») — մալեմ, մլմլեմ, մլաղաց, մամուլ, մեղմ.

αγκῆ «մանգաղ» (հ.-հ. ank-, ang- «ծոնել») — անկիւն, անգիւն.

-ւոյ [αἰδώς (αἰετός-Feյոյ) «հանդերձահսկիչ սպա», բոց. «հանդերձատես»]» (հ.-հ. ueid-: uid- «տեսնել, գիտնալ, գտնել») — գիտեմ, գէտ, գտանեմ (եզիտ «գտավ»).

εστέρια «հոգն. հյց. «շներին», այն է՝ տոնային սեղանից կերակրվող շներին», հմմտ. հուն. εστία «տոնային օջախ, տուն») (հ.-հ. ues- «անցկացնել, բնակվել, գիշերել») — գոյ, -ի, -ից, գոմ (գոս, գոյ):

§ 5. Մի շարք դեպքերում դժվար է խոսել հին մակեդոներենի և հայերենի միջև որոշակի զուգահեռների գոյություն մասին:

1) Համեմատվող բառերի մակեդոնական լինելը կասկածելի է կամ, որոշ դեպքերում էլ, մակեդոնական բառերը ակնհայտորեն փոխառվալ են.

αἰζα «սպիտակ բարդի» (հ.-հ. el- — գույն նշանակող արմատ, որից կաղմված են բույսերի և կենդանիների անուններ)¹⁸ — եղեին, ալլե եղն, եղնիկ.

αππα «հայր» [հ.-հ. appa «հայր» (մանկական բառ)] — աիու «հայր» (բրբո).

αρχών «պարագ ժամանակ, յղօնչ» (հայց.)» (Հեսիքիոս) [հմմտ. հուն. αρχός «առաջնորդ, ժուլ» < α-(F)εργός] (հ.-հ. uerg'- «գործել») — գործ, -ոյ.

βου «օղ» (? < փոխառ.) [հ.-հ. au(e)-, uē- «փչել»] — աւդ, -ոյ.

δεκα «դեկութիոն, տասնապետ, վերահսկիչ, պետ» (հ.-հ. dek'm «տաս») — տասն.

γενῆ «ծնոտներ» (= հուն. γένος) (հ.-հ. g'enu- և gonadh- «ծնոտ») — ծնաւտ.

ροῦβρος «հոգն. հայց.) «սեղանատամներ» (հ.-հ. g'embh-, g'mbh- «կըծել», g'ombho-s «ատամ») — ծամեմ.

γερών «առյուծ» (հմմտ. հուն. γέρων «շողաշլա, մարտական ցնծությամբ փալլող»՝ Հոմերոսի մոտ «առյուծ» բառի մակերիւր) (հ.-հ. g'her- «սիրել») — ձիրք.

¹⁶ Ավելի հակված են բնականաբար երկրորդից:

¹⁷ Բնականաբար են նաև mad- «թաց. հյուսիսից արմատից՝ մատուղ, մատղաշ բառերի հետ միասին:

¹⁸ Համեմատարար իլիրական աղբյուրից:

¹⁹ Կամ α > օ ա փոփոխությունը տեղի է ունեցել ուշ շրջանում, կամ, թերևս, բառ փոխ է առնվել (փոխադրելից): Վերջին դեպքում հմմտ. հայ. երկ:

²⁰ Մակեդոնական համար անսովոր է ք' > չ անցումը, եթե խլացումը կապված է է ռ-ի մոտ գտնվելու հետ: Ոմանք ենթադրում են իլիրական ծագում:

²¹ Մակեդոնական լինելը կասկածելի է, եթե նկատի ունենանք ք > չ անցումը:

²² Բառի մակեր. լինելը կասկածելի է (հմմտ. չ՝ փոխանակ չ-ի). ըստ Ս. Հոֆմանի՝ հուն. γέρων-ի կրճատ ձևը:

2) Մակեդոնական կամ հայկական բառերի ստուգաբանությունը կասկածելի է.

αὐτῇ «երկինք», αὐραία «պայծառ երկինք», αὐαλός «մուր» (հմմտ. հուն, αὐτῇ «երկինք», οἶ, երկինք», αὐραία «պայծառ երկինք», αὐαλός «մուր» (հ.-հ. ai- «այրել, լուսավորել», ai-ai-)-այգ «առավոտ»²³.

γούαν «խոզ» (հ.-հ. gʷou-, gʷū- «կեղտ, աղբ, կղկղանք»)²⁴ — կու, -ոյ, ալի «թերևս ճի, ճճի».

κούς «թիվ» [հ.-հ. (s)keu- «ուշադրություն դարձնել»]²⁵ — ցոյց, ցուցանեմ.

παράς «արծիվ» (հ.-հ. per- «անցկացնել, անցնել, թռչել»)²⁶ — հորդ «կոխված, շիտակ (ճանապարհ)», հորդեմ «ճանապարհ բանալ», հորդիմ «գրնալ, տարածվել», ալի հերին.

3) Հին մակեդոներեն և հայերեն բառերը պատկանում են տարբեր, թեև մերձավոր արմատների կամ միևնույն արմատից եկող հիմքային տարբեր ձևերի. երբեմն էլ կասկածելի է վերականգնվող հնդեվրոպական նախաձևի բուն հնդեվրոպական լինելը.

αἶσα «առեղ, քեղի» (հմմտ. հուն. αἶσα «չոր» < αἶσα «չորացած կեղտ, քափ, ժանգ» + αἶσ «չոր»), Ἀἶσα (անձնանուն) (հ.-հ. as- «այրել, վառել, վառվել», az-d-)-ազալիմ (az-σ' h-)-չորանալ, աճիւն.

αἰρεῖα «գետնափոր լողարան» (<թրակ.?) (հ.-հ. areσ- «փակել»՝ areq-ի կողքին «պաշտպանել, փակել»)-արգել, արգելում, թերևս նաև որմ (ork-mo-) (հ.-հ. areq-).

κικέρου (հգն.) «ոլոռ» (հ.-հ. k'ik'er- «ոլոռ, սիսեռ»)²⁷ — սիսեռ.

§ 6. Ավելորդ համարելով հատուկ անուններում պահպանված և հայերեն զուգահեռներ ունեցող բոլոր արմատների մատնանշումը՝ բերենք հավաստի ստուգաբանություններ մի շարք այդպիսի կարևոր զուգահեռներ.

1) Հ.-հ. bh, dh, gh.

Βαλ.αχρός (անձնանուն) (=հուն. φάλαχρος «ճաղատ»), Βαλ.α (հատուկ անուն), Βαλ.α (<Βαλ.α<Βαλ.αFα) (հ.-հ. bhel- «փայլուն, սպիտակ») — բալ «մեզ, մշուշ, մառախուղ».

Βερ- [Βερ.εν.α անձնանուն (թերևս նաև Βερ.ε.α), Βερ.α տեղանվան²⁸, Ἰπέρ.βερ.αἶος (մակեդոնական տոն՝ Զևսի պատվին) բառի մեջ] (հ.-հ. bher- «բերել») — բերեմ.

²³ Այգ բառի ստուգաբանությունը հեղինակին է.

²⁴ Սակայն ստուգաբանությունը կասկածելի է դարձնում σ' > γ համասլատասխանությունը.

²⁵ Սակայն համեմատում են և լիտվ. skaityti «կարդալ, հաշվել» բայի հետ, որ բխեցնում են հ.-հ. ku-ei-t- «ուշադրություն դարձնել, պատվել» հիմքից (այս դեպքում k' > γ անցումը մակեդոներենին հատուկ չէ):

²⁶ Ստուգաբանությունը ըստ Պիդանիի և Ռուսոնի.

²⁷ Հնդեվրոպական լինելը կասկածելի է. ալիի հավանական է ենթադրել հին փոխառություն լինելը.

²⁸ Կա և նույնանուն թրակյան քաղաք. Դ. Դեչևը մակեդ. քաղաքը համարում է բրիգանների կողմից հիմնված. թրակյան տեղանվան հետ նույնությունը նկատի ունենալով մենք տալիս ենք հիշյալ ստուգաբանությունը, ըստ Վ. Գեորգիևի՝ bheru(1)la ձևից (հ.-հ. bher- «հեղվել, եռալ» ձևից, որտեղից թերևս հայ. բուռն):

2) Հ.-Լ. b, d, g.

Be- (Be-gorrites լճի անվան մեջ) [հ.-Լ. duai «երկու» (հգն.)] — երկու, երկի-, երկո-.

Διν «ջու» (Διν-δούαլ տեղանվան մեջ) (հ.-Լ. «շողալ») — տիւ, ալիւ տի-
«մեծ» (տի-կին, տի-եզերք, տէր < տի-ալր բառերում).

-οιο- (Περιοιοι հատուկ անվան մեջ) (հ.-Լ. οιο- «ուռչել») — ալտում.

3) Հ.-Լ. p, t, k.

Πρεπ- (Πρέπελας անձնանվան մեջ) (հ.-Լ. prep- «աչքի ընկնել, երևալ, երևելիք, տեսք») — երկիմ.

4) Հ.-Լ. g'h, g', k'.

Αιγανη (տեղանուն, ավելի ուշ, -γ-ի անկմամբ, Αιανη) (հ.-Լ. aig'- «ալժ») — ալժ.

-γον- ('Αντιγονος անվան մեջ. հմմտ. և Geneates) (հ.-Լ. g'en- «ծնել») — ծին, ծնանիմ.

Κυννα (<Κυν-ια) (անձնանուն) (<իլիր.?) (հ.-Լ. k'unon-, k'un- «շուն») — շուն, թերևս, և սկունդ.

Κυρρος (<Κυρ-ιος) (տեղանուն) (հ.-Լ. k'eu- «ուռչել, գոգավորու-
թյուն») — սոր փոս, խոռոչ.

5) Հ.-Լ. քսի, քս, կս.

Bora (mons—լեռ), ալիւ Be-gorrites (լճի անուն du—g^u>du—g տար-
նմանությամբ) (հ.-Լ. gner-, g^uor- «լեռ») — կարկառ քարակույտ, կառու-
ցանիմ(?)²⁹.

εκπρος (Βιλ-εκπρος անձնանվան մեջ) (= հուն. εκπρος «ծի») (հ.-Լ. ek'uo-s «ծի») — էշ, -ոյ.

6) Հ.-Լ. s.

7) Հ.-Լ. r, l, m, n, j, u.

Ορεστια, Ορεστις (տեղանուն, ցեղանուն) [հ.-Լ. er- «շարժ(վ)ել, բարձ-
րացնել, հուզել»] — լառնեմ, լորդոր, արմ, զ-արմ, արմատ, լորդ, հորձ,
որհար, որդի(?).

Λευαία (անձնանուն) (հ.-Լ. leug'- «կոտրել») — լոյժ, լուծանիմ.

Ῥοδισα (տեղանուն, ալժմ Voden «ջրալին») (հ.-Լ. ued- «թրջել, հոսել», uedesia³⁰ — գետ, -ոյ.

Ειδομενι (քաղաքանուն) (հ.-Լ. ueid- «տեսնել») — գիտեմ, գտանեմ,
գիւտ.

8) Հ.-Լ. r, l, m, n.

Ῥορραβίος [հ.-Լ. rsen- «ալրական, տղամարդկալին», rsn-bh(o)-] —
առն «արու վալրի ոչխար».

§ 7. Ինչպես նշվել է (տե՛ս § 2), մ.թ.ա. IX-VIII դարամիջին Մակեդոնիայից
Փոքր Ասիա է գաղթել մի ցեղախումբ, որի լեզուն զգալի հետքեր է թողել
փոլուգիական հուշարձաններում և գլոսաներում: Այդ լեզուն ունի մակեդոնե-
րենի համար բնորոշ աֆայիսի մի կարևոր առանձնահատկություն, ինչպիսին
է հ.-Լ. ետնալեզվալիներին փոփոխությունը շրթնալիներին և առաջնալեզ-

²⁹ Հայ. բառերի ստուգաբանությունը հեղինակինն է.

³⁰ Մ. Ֆասմերը նույն արմատից է բխեցնում ղեսիքիոսի ավանդած βᾶδας «այլա-
սերված անձ» բառը՝ համարելով այն մակեդոնական, որ, սակայն, հավանական չէ (հմմտ.
g>β).

վայինների: Մեր «Հայերենը և փոյուզերենը» հոգվածում³¹ բերված են մակեդոնական փոյուզերենի (նույն իրավունքով կարելի է ասել՝ փոյուզական մակեդոներենի) այն բառերը, որոնք հայկական զուգահեռներ ունեն: Ահավասիկ դրանք:

βατος (vi-βατισμος «զինապար՝ ցած գցելու, գետին զարկելու պար») (հ.-ե. gūhen- «խփել, սպանել») — գան, ջին, ջինջ, ջունջ, ջնջիմ.

βεννος «բեղմնավորութուն. զոհաբերութուն», βεννεν «salve, ո՛ղջ լեր, ո՛ղջ եղիր(?)», βεννεχω «բարգավաճում եմ» (Զեսի մականունը) (հ.-ե. gūhen- «ուռչել, բղխել. լիութուն») — յոգն, -ունք.

οισουσις «կենդանիներին», οεουσιας «շատչ—կենդանու» (հ.-ե. σφει- «ապրել») — կեանք, կեամ, կենդանի.

τι (τ) «ինչ», τις-χες «ով էլ որ» (հ.-ե. kφei- «ինչ») — ի-նչ, ի-ք, ի-մն, ի-ր, -չ (ո-չ, ի-ն-չ).

οιμω «չորս, քառ-» (οιμω-αμβος՝ մր-αμβος-ի կողքին՝ «քառաքալ», «եռաքալ» իմաստներով, որպես պարի տակտերի նշանակում), մιορα- (μιδρα-χειν = հուն. τειραχειν), հ.-ե. kφettuōr, kφetur-, kφetra- և այլն) — չորք, քառ³².

Օ. Հաասը մակեդոնական փոյուզերենին հատուկ գիծ է համարում նաև երկու հաջորդական շնչեղ բաղաձայններից երկրորդի ապաշնչեղացման երեւոյթը.

Βερεχοντις (տեղանուն՝ «բարձրավանդակ, լեռնաստան») (հ.-ե. bhereg'h- «բարձր») — բարձր, բարձրաբերձ:

§ 8. Մակեդոներենը հայերենի հետ շփվելու ընթացքում պետք է նրան տված լինի զգալի քանակությամբ բառեր: Մական մակեդոներենի վերաբերյալ մեր տեղեկությունների սղութիւնը, այլև առկա նյութի անմիասնակունութիւնը մեզ զրկում են հայերենի մեջ մակեդոնական փոխառութիւնները քիչ թե շատ լրիվությամբ բացահայտելու հնարավորութիւնից:

Ինչպես նշել ենք «Հայերենը և փոյուզերենը» հոգվածում³³, ալդպիսի փոխառութիւն կարեւոր նմուշ է հայ. սուիմ-ը, որի աղբյուրն է մակեդ. συβινη «վարազորսի կարճ նիզակ» բառը (հ.-ե. sū-«խող» և gūhen- «խփել»):

Թեոևս մակեդոնական փոխառութիւն է նաև հայ. երկ բառը՝ *εργος-ից [հմմտ. Հեսիքիոսի ավանդած εργος «անգործութիւն, պարապութիւն» բառը = հուն. εργος < ἔ- (F) εργος < n-uergos]: Այս փոխառութիւնը պետք է կատարված լինի համեմատաբար ուշ շրջանում, երբ տեղի էր ունեցել rg < rk փոփոխութիւնը. իհարկե այս դեպքում, ինչպես նշվել է, հնարավոր է ենթադրել մակեդոնական բառի փոխառւալ լինելը փոյուզերենից: Եթե այս ենթադրութիւնը ճիշտ է, ապա պետք է բացառել երկ բառի իրանական ծագումը, ինչպես կարծում է Հ. Աճառյանը (Հայ. արմ. բառ., 2, էջ 285). Նրա բերած բոլոր զուգահեռներում, ինչպես և սպասելի էր, հայ. ե-ի զիմաց առկա է գերազանցապես ձ-՝ բալց չկա e-ով ձև:

³¹ «Պատմա-բանասիրական հանդես», 1968, № 2, Տե՛ս նաև O. Haas, „Lingbalk.“, X, էջ 148—152.

³² Օ. Հաասը (հիշ. աշխ., էջ 151) մակեդոնական է համարում նաև Հեսիքիոսի ավանդած εγχε «օձեր» բառը [հ.-ե. οφχιον-ի. որ այս դեպքում զուգահեռ կունենա հայ. օձ (og'hi-) և իժ (eghi)- բառերի մեջ: Ուրիշները այն զիտում են որպես իլիրիական բառ. (հմմտ. J. Pokorny, 1909. etym. Wb., I, էջ 44):

³³ «Պատմա-բանասիրական հանդես», 1968, № 2.

Մի շարք դեպքերում հայերեն բառերի համար կարելի է մատնանշել հին մակեդոնական ոչ ծագումնային զուգահեռներ, որոնք, սակայն, հանդես են բերում իմաստային ու հնչյունական որոշակի տարրերով թյուններ և, հետևաբար, հայերենի անմիջական աղբյուրը համարվել չեն կարող։ Այդ բառերի մի մասի համար բնորոշ է հնչյունական տեղաշարժը, և, եթե հայերենի աղբյուրը մակեդոներենն է կամ նրան մերձավոր մի լեզու, այլև, եթե թերևս, երկուսը ունեցել են մի երրորդ փոխառու աղբյուր, ապա հայերենը դրանք փոխ է առել մինչև Փոքր Ասիայում երևան գալը, հավանաբար Բալկանյան թերակղզում եղած ժամանակ։

βαταρα «ցորենի հաց»³⁴ — պատառ «կտոր, բեկոր (մանավանդ հացի)»³⁵.

βερρον «խիտ, գուռ»³⁶ — պիրկ³⁷.

γουαν «խող»³⁸ — կոճան «խող»³⁹.

δερυανος «կաղնի»⁴⁰ — տարիղան, «մի տեսակ բույս, ասպուր(?)»⁴¹.

ματτον «մի տեսակ համեղ ուտելիք»⁴² — մատու-տակ «քաղցրամատ մի բույս», մատուկ «մի բույս, թերևս մատուտակի մի տեսակը»⁴³.

χορινανος, այլև թերևս χόρινος «ապօրինի զավակ» (որպես «աղջկա, կույսի զավակ», համտ. հուն. χόρη «աղջիկ, կույս») — խորթ «պոռնկորդի, անհարս-զատ որդի, կոշտ, անհարթ»⁴⁵.

³⁴ Գրված է βαταρα. բայց ուղղելի է վերևում բերված ձևով, որովհետև այբբենական դիֆթոնգ չհսկիքիսի բառարանում գտնվում է βαταρα-ի և βατα-ի միջև։ Վ. Պիդանին թխեց-նում է հ.-ե. bhdg-ից (ստաբացնել, խորովել, եփել, թխել), որ քիչ հավանական է։

³⁵ Հմմտ. նաև բաղարջ(?)։

³⁶ Հմմտ. նաև βερρον «խիտ» (պատկանելիությունն անհայտ է) և (-³⁷ ածանցի համար) βερρον-ος «լավ» (չհսկիքիսի)։ Վ. Պիդանին համեմատում է լատ. hirsutus «զղզղված գուռ», կույսի բառի հետ և վերականգնում g^hhirs- նախաձևը, սակայն լատ. բառը ավելի հակված են թխեցնելու ք'ner-s- հատել, բեռնել, սառչել, փշաքաղվել նախաձևից, որտեղից հայ. ձուր «մազ» (ձուրի «մազոտ, թավ»), ձուռ «ծուռ, տղեղ, կոշտ»։

³⁷ Հմմտ., թերևս, նաև բիրա «պիրկ, ամուր, պինդ (փայտ), կույսի» և սլիւր «ծանր կամ կարծր» (ըստ երևմիայի բառարանի)։

³⁸ Բառի թխեցումը հ.-ե. gou-, g^hu- «կեղտ, կղկղանք» արմատից խիստ կասկածելի է (g^h>γ փոփոխությունը մակեդոներենին հատուկ չէ)։

³⁹ Հ. Աճառյանը (Հայ. արմ. բառ., 3, էջ 1307) խոն «խող» (խոն-կոր բառի մեջ) և, որոշ կասկածով, խող բառերի հետ միասին համարում է կովկասյան փոխառություն (նկատի ունի բարթվ. γοτ- (յրաց, γοτ- մեղր.-ճան. γεջ- խող) արմատին պատկանող ձևերը, որոնց համար նշում են արխաղա-աղբյուր (արխ. -xəθa, աղբ. kxyə) և նախյան (չեչ.-xəka, բաղր. kxa) զուգահեռներ։

⁴⁰ Թխեցնում են հ.-ե. deru-, dōru- «ծառ» նախաձևից, որտեղից հայ. տարգալ և տրամ։

⁴¹ Համեմատությունը կասկածելի է։

⁴² Համեմատում են հուն. ματτον (ատտիկ. ματτω) «սեղմել, ճնշել, զանգել, շոշափել» բայի հետ, որ թխեցնում են հ.-ե. mag'-ից (սեղմել, ճնշել, զանգել, շոշափել) կամ men(ə)k-ից (սեղմել, ճնշել, զանգել, մանրել)։ Համապատասխան հայ. մա-ծուն-ը թխեցնում են mag'-ից կամ mad-ից (թափ, հյութալից, վերջինիցս հայ. մալաղ)։

⁴³ Ըստ կանինիի՝ հ.-ե. medhu- «մեղր» + հայ. տուկ «արմատ», ինչպես կաղմու-թյամբ համապատասխանող հուն. γλυκύς բառը։ Հ. Աճառյանը (Հայ. արմ. բառ., 4, ստուգարանություն էջ 877—878) հարմար համարելով ըստ իմաստի՝ անհարմար է համարում հնչյունապես (մատու-ն չի կարող գալ ոչ հունական, ոչ էլ իրանական աղբյուրից)։

⁴⁴ Հ.-ե. k'er-ից (աճել, աճեցնել, սնել), որտեղից հայ. սեր, սերունդ, սեռ, սերմ(ն)։

⁴⁵ Համեմատությունը կասկածելի է։

Որոշ զեպքերում հայերեն բառերի համար մատնանշելի հին մակեդոնական զուգահեռները հայերենից ավելի հեռու են, քան այլ լեզուների համապատասխան ձևերը, և, հետևաբար, այդ բառերի աղբյուրը հին մակեդոններենը չէ:

αχρῶνος «սահմանանիշ քարեր» (հմմտ. հուն. ἀχρᾶ εὐθύρι, գագաթ) <հ.-հ. ak'- -r- «սուր. քար») — ակռալ (բրբռ).

βίλ- «սիրելի, համակրելի, բարեկամ» (=հուն. φίλ-) [Bιλ-ιππος (=հուն. Φιλ-ιππος), Bιλιστιγγի հատուկ անուններում] (հմմտ. լիդ. bili- «նրա»՝ bi- «նա» զերանվան սեռականը. հուն. բառը համարում են հին անատ. աղբյուրից) — բեղուն «համակիր, սիրող».

γαρχαν (հայց. հ.) «ճյուղ, փայտ, ճիպոտ»⁴⁶ — կառ «ծառի մեծ ճյուղ», կառ «փուշ»⁴⁷.

Հետաքրքրական է նշել, որ «Պատմություն Աղեքսանդրի Մակեդոնացու» գրքի՝ V գ. կատարված թարգմանություն մեջ⁴⁸ հանդիպում է կարաճնոն «մակեդոնական կանացի մի զգեստ» բառը «Առաքելի բերել ձեզ զկարանոն Մակեդոնական» նախադասություն մեջ: Այս բառը, անշուշտ, նույնն է Հեսիոդոսի հիշատակած χῆρυκος «կանացի գլխակապ, փարսակալ» էոլիական բառի հետ, որ հավանաբար եղել է նաև մակեդոններենում. այն մակեդոնական χῆρυκος «իշխան, թագավոր» բառի հետ միասին ծագում է հ.-հ. k'er- «մարմնի վերնամաս՝ գլուխ, եղջյուր» արմատից⁴⁹.

Մակեդոնական կամ մերձավոր հունական աղբյուր կարելի էր ենթադրել հայ. քառիրթ «անասունի ստամոքս, փոր» բառի համար՝ նկատի ունենալով մակեդ. Celetrum քաղաքանունը՝ համապատասխան հուն. χέλαια-ին (հմմտ. հայ. Ձորովոր, Կողրովոր տեղանունները), բայց այս բառերի համար ենթադրում են «մարգագետին, արոտավայր» (հուն. χείλω «քշել») կամ «ծիրթհան» (հուն. χέλαια «տորոքել»)՝⁵⁰ իմաստները:

Հատուկ անունների բնագավառում մակեդոններենից կատարված անմիջական փոխառություններ ամենայն հավանականությամբ չկան: Հունաստանում և Մակեդոնիայում ընդհանուր գործածություն ունեցող Ἀλεξανδρος ան-

⁴⁶ Օ. Հոֆմանը համեմատում է լատ. վ. zars «ճյուղ» բառի հետ: Սակայն հմմտ. հ.-հ. g'er-s- «ծոնել, ճյուղ, թուփ», որտեղից հայ. ծառ, ծուռ և որտեղից, մի այլ լեզվի միջնորդությամբ, ծագած են համարվում համեմատվող հայ. կառ «ծառի մի ճյուղ» և կառ «փուշ» բառերը (տե՛ս հեղինակի «Очерки по истории дописьменного периода арм. языха» աշխատությունը, Երևան, 1967, էջ 185—186): Վերջին զեպքում հմմտ. γαρρα «ճյուղ, փայտ, ճիպոտ» (ըստ Հեսիոդոսի):

⁴⁷ Հ. Աճառյանը (Հայ. արմ. բառ., 3, էջ 1000) համեմատում է հ.-հ. g'ers-ին պատկանող հուն. բառերի հետ, բայց տալիս է g'ro- նախաձևը, որ Պոկոռնու մոտ չկա (կա g'etu «ձող, նիզակ»):

⁴⁸ Սուտ-կալիսթենէս, Վենետիկ, 1842:

⁴⁹ Հ. Աճառյանը (Հայ. արմ. բառ., 3, էջ 1034) բերում է կարաճնոն բառը առանց ստուգաբանության: Հուն. γαστήρ «փորտիք» և ոռուս. желудок բառերի հետ՝ որպես մի այլ հ.-հ. լեզվից հայերենին անցած բառ: Այն կարելի էր համարել պեղասգյան χέλαιον-ից, բայց բառի «խայ» իմաստը այդ իրավունքը չի տալիս:

⁵⁰ Մեր «Очерки по истории дописьменного периода армянского языка» գրքում (Երևան, 1967, էջ 124) քաղիրքը համեմատված է հուն. χολαῖς «փորտիք» և ոռուս. желудок բառերի հետ՝ որպես մի այլ հ.-հ. լեզվից հայերենին անցած բառ: Այն կարելի էր համարել պեղասգյան χέλαιον-ից, բայց բառի «խայ» իմաստը այդ իրավունքը չի տալիս:

վան հայ. Աղեքսանդր ձևը, որ հանդիպում է VIII դարից սկսած, հունական փոխառություն է: Անձնանունների մեջ հանդիպող Ἀρραξῆος և Առաւան, Βαλαχρός և Բաղալ, Δαδων և Դադլ. (Դադլու) զուգահեռները կասկածելի են: Պարզ չէ մակեդ. 'Ορόντας և հայ. 'Օրօնտէս անձնանունների փոխհարաբերությունը. հայ թաղավորի 'Օրօնտէս անունը նույնացվում է Հրաւաի հետ (նաև Հրաւիգ, Հրաւսն գրված). 'Օրօնտէս, 'Օրօնտէս անձնանունները հանդիպում են նաև իրանական ծագման անձերի համար և ներկայացնում են պճլ. Arvand-ի հունականացված ձևերը, մի անվան, որ փոխ է առնվել հայերենում Երուանդ ձևով. ամենայն հավանականությամբ իրանական ծագում ունի Հրաւա ա- նունը (հմմտ. հր րազածայնախումբը, որով սկսվող բառերը հայերենում իրանական ծագման են, եթե ուր-ն ուր-ից չի ծագում): Սակայն մակեդո- նական անվան համար իրանական ծագում ենթադրել դժվար է, մանավանդ որ -տէս-ը մակեդոնական սովորական ածանց է:

Կասկածելի են նաև տեղանունների և ցեղանունների քննադատում հանդիպող ալեպիսի զուգահեռները, ինչպիսիք են Sakos (զյուղանուն) և Սիսական³¹, 'Օքս (քաղաքանուն) և արմեն (=Urme, Arme՝ ուրարտական աղբյուրներում):

§ 9. Մակեդոնա-հայկական զուգաբանությունների ուսումնասիրությունը մեզ բերում է հետևյալ եզրակացություններին:

1) Մակեդոնա-հայկական ծագումնալից զուգադիպումները զնահատե- լիս պետք է նկատի ունենալ հունա-հայկական զուգադիպումները, եթե հաշվի առնենք հունա-մակեդոնական լեզվական մերձավորությունը: Հայտնի է, որ հայերենի և հունարենի զուգաբանությունների քանակը և որակը վկայում են այդ երկու լեզուների նախազինվածների բարբառային նշանակալից մերձավո- րության մասին: Դրանց հետ կարող են համեմատվել միայն հնդիրանա- հայկական զուգաբանությունները եթե նկատի ունենանք մակեդոնական նյու- թի սղությունը, մակեդոնա-հայկական բառապաշարի ծագումնալից զուգադի- պումների քանակը փոքր չէ: Որոշ կարգի բառային զուգահեռներ խոսում են հատուկ մերձավոր կապերի մասին. դրանց թվին են պատկանում ոչ միայն αργεῖνος—արծուի զուգահեռ ձևերը, որոնց մասին խոսվել է, այլև αἰγ- «այծ» (Αἰγανῆς տեղանվան մեջ)—այծ, πειρῶς «ժերունի» (բոց. «ալեոր») —ալի-ք թափտակ մազ» (հմմտ. ալեոր, ալեհեյ, ալեզարդ) զուգահեռները: Խիստ կարևոր է նաև χιχέρω (հզն.) «ոլոռ» և սիսեռ զուգահեռը, որ նույնիսկ վերա- կանգնվող k'ik'er-ի ոչ հնդեվրոպական բնույթ ունենալու դեպքում էլ խոսում է մակեդոնա-հայկական հնագույն կապերի մասին (նախքան հայերենում հ.-և. քմալնացած ետնալեզվայինների՝ կիսաշփականների ու շփականների վերած- վելը):

2) Մակեդոնա-հայկական ոչ ծագումնալից հավաստի զուգադիպումների քանակը առաջիմ մեծ չէ, որ մասամբ էլ թերևս բացատրվում է մակեդո- նական մատչելի լեզվական նյութի սղությամբ: Սակայն դրանց մեջ սուիև բառի ունեցած պատմա-լեզվական կարևոր արժեքը խոսում է մակեդոնա- հայկական շփումների հետագա ուսումնասիրության կարևորության մասին:

3) Մակեդոնա-հայկական հնչյունական զուգահեռները մեծ մասամբ ընդ- հանուր են նաև հունարենի համար: Դրանց թվին են պատկանում բառա-

³¹ Ենթադրվում է սակերի անունից:

սկզբնաին s-ի անկումը, վանկարար ձայնորդների՝ a ձայնավորումն ստանալը, միջձայնավորային u-ի անկումը (հայերենում միայն մասնակի զեպերում) և այլն: Կան նաև մակեդոնա-հայկական այնպիսի հնչյունական զուգահեռներ, որոնց զեպում հունարենը շեղվում է՝ հ.-ե. bh, dh, gh-ը դիմաց մակեդ. β, δ, γ և հայ. բ, դ, գ (հուն. φ, θ, χ)³², հ.-ե. o-ի դիմաց մակեդ. ου և հայ. ու (հուն. ω), հ.-ե. ep-ի դիմաց մակեդ. εν և հայ. ին (հուն. εν) և այլն:

4) Եթե Βερ(ρ)ուս-ն նաև բուն մակեդոնական քաղաքանուն է (և ոչ թե միայն թրակյան), ապա պետք է նշել նրա զուգադիպումը հայաս. Βαρρāja (Ραρρāja) քաղաքանվան հետ: Այդ զեպում թերևս կապ կարելի է տեսնել նաև Almana և Halimana, Ἀρνία և Arniia տեղանունների, Γούγια և Hugga-naš, Καρρνος (Καρρνος) և Karanniš, Κεβλίνος (այլև Κεβλός) և Gabildiš անձնանունների միջև:

³² Ավելորդ չենք համարում նշել, որ մակեդ. β, δ, γ—հուն. φ, θ, χ համապատասխանությունը խոսում է հ.-ե. bh, dh, gh շնչեղ ձայնեղների վերականգնման հավաստիության մասին:

Г. Б. ДЖАУКЯН

АРМЯНСКИЙ И ДРЕВНЕМАКЕДОНСКИЙ ЯЗЫКИ

Резюме

Статья является первым специальным исследованием армяно-древнемакедонских генетических совпадений и армянских заимствований из древнемакедонского языка.

При оценке армяно-древнемакедонских генетических совпадений автор исходит из значительной близости армянского и греческого языков, учитывая диалектную близость древнемакедонского с греческим. Армяно-древнемакедонские фонетические параллели большей частью охватывают также греческий—выпадение s, огласовка а при развитии и.-е., слогообразующих сонантов и т. д. В некоторых же случаях греческий отклоняется и армянский сближается с древнемакедонским—развитие звонких придыхательных в β, δ, γ и b, d, g, закрытость օ, переходящего в օւ и u (эта черта присуща также фессалийскому диалекту греческого языка), изменение ep в εν и ιn.

Среди нескольких десятков лексических изоглосс особенно важно отметить такие, как ἀργυρεός—argui «орел», αἰγ—(в топониме Λιγυαῖη)—aic «коза», παλιός «старик»—ali-k^c «седина», а также χίχερροι—siseṛn «горох» (для последней пары восстанавливают и.-е., проформу k'ik'er-, но более склонны возводить их к неиндоевропейскому источнику).

Несмотря на небольшое количество лексических совпадений негенетического порядка между армянским и древнемакедонским, большое историко-лингвистическое значение армянского suin «копье» (ср. սուխի) говорит о необходимости дальнейших изысканий в этом направлении.